ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

մայիսի 2021 թվականի № Ա
ք.Երևան

«ԱՆԻ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՋՐԱՃՈՐ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 25-ի N 399Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) իրականացված վարչական վարույթում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա փոփոխվել է «Անի» բաց բաժնետիրական ընկերության «Ջրաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանի (այսուհետ՝ Կայան) դասակարգումը՝ այն բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանների շարքից հետ դասելով ոռոգման համակարգի վրա գործող փոքր հիդրոէլեկտրակայանների շարքին, և փոփոխվել է Կայանի սակագինը՝ բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի մեծության՝ 24,276 դրամ/կՎտժ-ի (առանց ավելացված արժեքի հարկի) փոխարեն ամրագրելով ոռոգման համակարգերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի մեծությունը՝ 16,181 դրամ/կՎտժ-ին (առանց ավելացված արժեքի հարկի) հավասար, և նշված դրույթները սահմանվել են անհապաղ կատարման ենթակա,

բ) Որոշումը վիճարկվել է դատական կարգով, և Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2019 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ դրա կատարումը կասեցվել է մինչև ՈՎԴ5/0163/05/19 վարչական գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող

հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Անի» բաց բաժնետիրական ընկերության «Ջրաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանել 26.185 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 31.422 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
2. Ընդունել ի գիտություն, որ ՈՎԴ5/0163/05/19 վարչական գործով վերջնական դատական ակտի կայացումից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը կձեռնարկի տվյալ ակտից բխող համապատասխան միջոցներ (անհրաժեշտության դեպքում նաև Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանում (վերանայում):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
մայիսի 2021թ.